

Լալա Հովհաննեսի Գրքիկյանի «Ժամանակակից արևելահայերենի չեզոք սեռի բայերի արժույթը» թեկնածուական ատենախոսության մասին

Ժամանակակից լեզվաբանության մեջ արժույթ հասկացության համառոտ ձևակերպումը հանգում է հետևյալին. լրացումառություն պայմանավորված գերադաս անդամի իմաստային և քերականական, մասամբ նաև բառակազմական հատկանիշներով: Բայի համակարգում, ինչպես հայտնի է, այն դրսևորվում է մի քանի կոնկրետ տարբերակներով կամ ձևերով էնթակաառություն, ստորոգաառություն, կոչականառություն, խնդրառություն և պարագաառություն Այս բոլորի մասին բայ խոսքի մասին նվիրված ուսումնասիրություններում և, առհասարակ, այսպես կոչված, բառակազմակցության տեսության մեջ բավարար չափով խոսվել է մասնավանդ էթեկատի առևնեց, որ բառերի կապակցելիության ուսումնասիրությունը 20-րդ դարի կեսերից սկսեց առանցքային տեղ գրավել նաև շարահյուսական կապի տեսության մեջ: Եվ տպավորություն կա, որ ասելու կամ քննարկելու առանձնաբար ամիթ չկա, կամ բավարար քանակի նոր նյութ դժվար է հայթայթել: Բայց ահա Լալա Գրքիկյանը պաշտպանության ներկայացված սույն ատենախոսությամբ մեզ համար բացում է փոքր-ինչ այլ ճշմարտություն: Եվ այդ ճշմարտությանը նա հասնում է գիտական-վերլուծական և մեթոդաբանական մի քանի հնարքներով, որոնք ատենախոսության եամար ապահովում են շատ հստակ արձանիքներ: Դրանցից առնվազն մի քանիսը կոչված են հիշատակության:

Նախ՝ աշխատանքում ի մի են բերված հայ լեզվաբանության մեջ եարցի մասին եզած քիլ թե շատ հարևի գրեթե բոլոր կարծիքները Գ. Ջահուկյան, Վ. Առաքելյան, Վ. Քալան, Հ. Հարությունյան, Մ. Ասատրյան և ուրիշներ, ըստ անհրաժեշտության հղումներ են արվում նաև օտար հեղինակներին և առանձին գուգաներուն անցկացվում նաև այլ լեզուների, մասնավորապես անգլերենի հետ:

Երկրորդ՝ ատենախոսության մեջ քննարկման առարկա են դարձել նաև հայ օերականագիտության մեջ հարցին առնչվող նոր ըմբռումներն ու

տարակարծությունները: Հայտնի է, օրինակ, որ կոչականի նախադասության անյամ
լինել-չլինելու հարցը մեր շարահյուսագիտության վիճելի հարցադրումներից է, որին
սերտորեն առնչվում է բայի կոչականատության խնդիրը: Հեղինակը չի խուսափել այդ
տարակարծությունները ներկայացնելուց: Սկզբունքորեն ճիշտ կողմնորոշվելով իր
ղեկավարի կողմից արդեն իսկ գիտական շրջանատության մեջ դրված բայի
կոչականատության որպես բայի արժույթի նոր դրսևորման տեսության հարցում՝
ատենախոսը փորձում է իր կողմից քաղված նոր օրինակներով և տեսական նոր
հիմնավորումներով հաստատել այդ կարծիքը: Շատ այդմ՝ կոչականատությունը, որը
հանդես է գալիս միայն ուղղակի խոսքի սահմաններում, հիմնականում առնչվում է
ենթակատությանը (բացահայտում է նախադասության ենթակայի ով լինելը),
կոչականատությունը առնչվում է բայի խնդրատության արժույթին (բացահայտում է
պահանջվող խնդիր լրացման ով լինելը) և, վերջապես, պայմանավորված տվյալ
նախադասության ստորոգյալի դեմքով, կոչականը կարող է քերականական կապի
մեջ լինել նաև նախադասության այլ անդամների հետ, օրինակ «—Մամվել է, քո քույրը
քեզից խուսափում է. — ասաց նա որդուն». այս նախադասության մեջ թվի
քերականական կարգով համաձայնել են ուղիղ խոսքի կոչականը (Մամվել),
հատկացուցիչը (քո), անփատման խնդիրը (քեզից) և հեղինակի խոսքի հանգման
խնդիրը (որդուն): Եվ, ինչպես տեսնում եք, հարպարժան գործընկերներ,
փաստարկները միանգամայն համոզիչ են: Այս նոր մոտեցմամբ հեղինակը շուրջ 12
էջով մեզ է ներկայացնում չեզոք սեռի բայերի արժույթի դրսևորումներից
կոչականատությունը ժամանակակից արևելահայերենում: Հարցի այդչափ
ամբողջական նկարագրություն մեր քերականագիտությունը մինչև այսօր չի ճանաչել:

Երրորդ՝ բոլորս էլ կարդացել ենք կամ գոնե թերթել ենք թեկնածուական առաջին
ատենախոսություններ և եկեք խոստովանենք, որ դրանցից շատերում կամ գոնե
դրանց մի մասում բացակայում է հարցադրումների հստակությունը, քննարկվող
հարցերի շրջանակը երբևէ ներկայացվում է անորոշ ու տարտամ: Այս
ատենախոսության հեղինակը որդեգրել է շատ հետաքրքիր մեթոդաբանություն,
նախափրում է հարցը քննարկելուց առաջ, իր կատարելիք աշխատանքի
կատուցվածքից ու վերլուծության սկզբունքներից էլնելով, հստակեցնել դրա
շրջանակները: Այսպես, օրինակ կոչականատության դեպքում արժույթը որևէ

արտահայտություն չունի բայի դիմաթվային որոշակի հարաբերություններում և փոխաբերական գործածություններում, երբ կոչականի դերով հանդես են գալիս իրանիչ կամ կենդանանիչ գոյականները: ատենախոսը հարցը քննարկելուց առաջ հիմնավորում է, թե ինչու չի անդրադառնալու այդ դրսևորումներին: Կամ՝ քանի որ առողրության և թույլ կառավարման եղանակներով իրականացող խնդիր և պարագա լրացումներով շարահյուսական կապակցությունները չեն արտացոլում այս կամ այն բայի խնդրառական և պարագաառական արժույթների իրական պատկերը, հետևաբար «դուրս են մնում մեր ուսումնասիրության դաշտից» (առ. էջ 79): Եվ կամ՝ ներկայացնելով երկարժույթ, իսկ երբեմն նաև եռարժույթ բայերի երկրորդ խնդրի հաճախ համեմատաբար թույլ լինելու վերաբերյալ Գ. Ջահուկյանի դիտարկումները հեղինակը հավելում է, որ խնդրառությամբ երկարժույթ բայերի դեպքում ներկայացնում են միայն ուժեղ և համեմատաբար ուժեղ կառավարմամբ կապակցվող երկրորդ խնդիրները (տե՛ս առ. էջ 80): Եվ այսպես մի շարք դեպքերում: Հստակեցվում են նաև տերմիններ, որոնք տարրակալումներ ունեն մեր գիտության մեջ, ինչպես ատենախոսը ըստ էության հրաժարվում է Ջահուկյանի կառավարություն տերմինի գործածությունից իր երկու տեսակներով միակի և բազմակի, նախապատվություն է տալիս ժամանակակից հայ քերականագիտության մեջ առավել ընդունված կառավարում տերմինին, կառավարումը գործածում է նշելու համար բառերի կապակցման եղանակը (առողրություն, համաձայնություն, շարահարություն), իսկ **խնդրառություն** տերմինը նշելու համար արժույթի դրսևորումներից մեկը (ենթակառություն, ստորոգառություն, պարագաառություն, կոչականառություն): Այս մեթոդաբանությունը ավելի ընկալելի և հիմնավորված է դարձնում հեղինակի մոտեցումները, բայի կապակցելիական այս կամ այն դրսևորման նկարագրությունը դառնում է առավել հստակ ու որոշակի:

Չորրորդ թվում է, թե չեզոք սեռի բայերի հոծ բազմության մեջ, այսպես կոչված, արժութային դասակարգումը դժվարություններ չունի: Հիմք ընդունելով բայի իմաստաբերականական յուրահատկությունները՝ իրապես հնարավոր է բավարար ճշգրտությամբ առանձնացնել խնդրառական արժույթից գուրկ բայերը (օր.՝ *իրիկնանալ, վախճանվել, վազել, ծլել, տխրել* ևն), ինչպես նաև խնդրառական, պարագաառական և այլուրային մյուս դրսևորումներով բնութագրվող բայերի

շարքերը բերելով համապատասխան օրինակներ զանազան աղյուսակներից Սակայն ըստ նշված հատկանիշների առանձնազվող բայերի խմբերը ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում, որ դա այնքան էլ հեշտ գործ չէ. այդ դասակարգումը պահանջում է ոչ միայն համապատասխան քերականական գիտելիքներ, այլև նուրբ լեզվագագայտություն ու հմտություններ, որո բխում է կյուֆի լավ իմացությունից ու փորձաշատությունից Ավելին այդ շնորհներով է, որ ուսումնասիրողը կարողանում է նշված դասակարգումից զատ դրանք նաև նկարագրել ու ներկայացնել ըստ կառավարման եղանակների անմիջական կառավարման եղանակ. որը պարտադիր ենթադրում է, իսկ երբև՛ն նաև պահանջում է խնդիր լրացում (մտնենում են մեզ), միջնորդական կառավարման եղանակ. երբ չէզոք սեռի բայերը պարտադիր ենթադրում են ն անհրաժեշտության դեպքում պահանջում են խնդիր լրացում արտահայտված *կապ-կապվող բառ* կազմապարով (Արոր էր անում պարելով *փոխանակ մաճր բռնելու*) նև Իբրև ատենախոսի այդ կարողությունների ապացույց բազմաթիվ դեպքերից բերենք միայն մեկը. հայտնի է, որ արդի արևելահայերենում կան ներգործական սեռի միարժույթ կամ երկարժույթ բայեր, որոնց ուղիղ խնդիրը լինում է միայն անձանիչ կամ անձի առումով գոյական կամ դերանուն տրական հոլովով, այսինքն՝ որոնք ուղղականաձև ուղիղ խնդիր սովորաբար չեն պահանջում և հետևաբար ստանում են միայն ո՞ւմ հարցը. Այդպիսի բայերից են *բանադրել, բամբասել, բանսարկել, գայթակղել, թագազրկել, ժամադրել, իրավազրկել, խանղել, խաբել, հանդիմանել, հուսադրել, մխիթարել, ոգեշնչել, պսակադրել, սիրահետել, սրտապնդել, ստիպել*: Սրանց կողքին ունենք խնդրառությամբ միարժույթ չէզոք սեռի բայեր, որոնք նույնպես պահանջում են տրական հոլովով լրացում անձանիչ գոյականներ և բնականաբար դարձյալ ստանում են միևնույն ո՞ւմ հարցը, ինչպես *բարոյախոսել, դավադրել, ընկերակցել, որդիանալ, շողորորթել, քծնել, ցավակցել* նև Այսինքն մի կողմում ունենք *«Թագադրեցին Արշակ Երկրորդին»* (ո՞ւմ): *«Լշանեցին Մարտին»* (ո՞ւմ), մյուս կողմում *«Ջանգաճարեցի իմ ընկերներին»* (ո՞ւմ): *«Ցավակցում էնք* նրա բոլոր հարազատներին այդ մեծ կորստի համար» (ո՞ւմ), առաջին դեպքում ունենք խնդրառությամբ միարժույթ և երկարժույթ ներգործական սեռի բայեր, իսկ երկրորդ դեպքում՝ խնդրառությամբ միարժույթ չէզոք սեռի բայեր: Մինչդեռ դրանց

համոզիչ տարանջատումը և իմաստային-քերականական վստահ նկարագրությունը բոլորովին էլ հեշտ խնդիր չէ:

Կարելի է նշել ատենախոսության նաև այլ արժանիքներ, ինչպես աշխատանքի կոտ կառուցվածքը, բերված որինակների հարուստ բազմազանությունը, հեղինակի՝ նյութի գործնական և տեսական իմացության միանգամայն բավարար չափը, վերլուծելու և գիտական համոզիչ ընդհանրացումներ անելու հեղինակի ակնհայտ կարողությունը, շարադրանքի անվիճելի զրգվետ որակները, օգտագործված հայերեն և օտար տեսական գրականության ու աղբյուրագիտական նյութի հարստությունը ևն. ևն Աշխատանքը նաև հազեցած է գիտական հարուստ տեղեկատվությամբ:

Ատենախոսության առավել հաջողված բաժիններն են չեզոք սեռի բայերի կոչականառությունը, խնդրառությամբ երկարժույթ և պարագառությամբ եռարժույթ չեզոք սեռի բայերին վերաբերող հատվածները:

Լալա Հովհաննեսի Գրքիկյանի պաշտպանության ներկայացրած ատենախոսությունը հաջողված է և հեղինակի համար ուղիղ ճանապարհ է հարթում բախելու Բանասիրական գիտության տաճարի դռները:

Ունենք մի քանի դիտարկումներ. դրանք միզուցե քանակով մի քիչ շատ թվան, սակայն բովանդակության ուժով և խստությամբ հաստատապես վստիտ են, քանի որ առավելապես գիտական ցանկությունների կերպարանք ունեն՝ պայմանավորված աշխատանքում շոշափվող հարցադրումների տարողունակ ու եևտաքրքիր բնույթով:

1. Մենք առիթը և հնարավորությունը չունեցանք *Արևակի* վիճակագրությանը դիմելու, Բայց նաև առիթը չունենք չհավատալու այդ էջից ատենախոսի ներկայացրած վիճակագրությանը. ատենախոսության մեջ կարդում ենք. Արևակի «պատահականորեն ընտրված ձգտում էի Բայաձևով շուրջ 80 նախադասություններից ոչ մեկում չի հանդիպում *ձգտում էի-տրական հոլով անաբաջ գերբայ կապակցություն*», կամ «Ձգտում էի Բայաձևով վկայված շուրջ 1000 նախադասություններից առաջին 500-ի մեջ *ձգտում էի-տրական հոլովով անաբաջ գերբայ կապակցությամբ հանդիպում է ընդամենը 4 նախադասություն*» (ատ. էջ 88): Ասել է թե, ըստ ատենախոսի բերած տվյալների՝ 800 նախադասությունից 4-ում է, որ

կգտել Բայր գործածված է ճիշտ խնդրատությամբ ժամանակակից հայերենի նորմին համապատասխան: Այս վիճակագրությունը խիստ պարտադրող է և մանավանդ զայբակղիչ Լորմատիվ քերականության մեջ ընդունված կարծիքը տարբերվող է. այն է՝ սրանք օտար լեզուների ազդեցությամբ առաջացող սխալ կառույցներ են. որոնք լայնորեն տարածված են խոսակցական լեզվում և հանիրավի նույնացվում են բացարձակ աներևույթի հետ. որի դեպքում խնդրառու Բայր զոյական կամ դերանուն խեղդիների հետ առիասարակ չի կապակցվում և ունենում է միայն անորոշ դերբայի ուղիղ ձևով արտահայտված լրացում. ինչպես *համարձակվում է խոսել, աշխատում է սիրահանել, կարողանում է երգել* ևն. Այսինքն հարցը դեռ բանավիճալին մակարդակում է: Արդյո՞ք վաղածամ չէ ակադեմիական զրականության մեջ. այս դեպքում՝ ատենախոսության մեջ *դադարել, երկյուղել, ձգտել, խանգարել, խուսափել* ստորոգառու Բայերի՝ անորոշի ուղիղ ձևով կապակցելիությունը բնորոշել բացարձակ անորոշ տերմինով և նույնականացնել լուր բացարձակ անորոշին կամ բացարձակ աներևույթին ճիշտ է. հեղինակը անդրադառնում է եղած կարծիքներին. բաց թ սեգրանե որդեգրել է վերը նշված և կանոնական քերականության մեջ տակավին արդ կառույցներին չվերաբերող տերմինաբանություն:

2. Աշխատանքը մեծապես կշահեր, եթե հատուկ ընտրության առարկա դասնային նաև սեռային տեղաշարժերով և կրկնասեռությամբ պայմանավորված արժուքային աեղաշարժերը: Այդ դեպքում հեղինակը հնարավորություն կունենար ավելի համակողմանիորեն ներկայացնելու անանցողական համարվող մի շարք Բայերի անցողական բնության. հետևաբար նաև արժույթի փոփոխության պատճառների նկարագրությանը: Օրինակ՝ անանցողական միարժույթ չեզոք սեռի Բայեր են *զիստարկվել, անցնել, բարբառել, դավաճանել, պարապել, ակնարկել, մտորել, նախընտրել* և նման մի քանի այլ Բայեր: Սա առնվազն բանավեճի առարկա կարող է դասնալ, եթե, օրինակ, այս Բայերի արժույթը ներկայացնելիս չնշվեն իմաստափոխական, խնդրատական և գործառական կրկնասեռությամբ պայմանավորված դրանց կապակցական հնարավորությունները. այս դեպքում կանկրտ խնդրատությունը Օրինակ՝ պարապել Բայը միարժույթ չեզոք սեռի Բայ է. եթե առնվում է *զբաղվել իմաստով* (իմաստային խնդրատություն զբաղվել գործերով, ոսկերությամբ, իսկ սովորել, հետազոտել իմաստով ներգործական սեռի

երկարժույթ քայլ է (*Ֆիզիկա* է պարապում իմ դասագրքով). կամ անցնել-ը չեզոք սեռի միարժույթ է, էթե հանդես է զայն *փոխանցվել*. *փոխվել* իմաստով (անցե ք հաջորդ հարցին) և երկարժույթ է *գերազանցել* իմաստով (Ուս *սույանիչներով* անցավ իր *մրցակցից*). քայլը ներգործական սեռի երկարժույթ քայլ է *ուսումնասիրել*, *հետազոտել* իմաստով (այդ դասը ձեր դասագրքով ենք անցել): Ավելին նույն հասկանանքներով պայմանավորված լուրջ քննարկման առարկա կարող էր դառնալ *անցա դիմացի փողոցը*. *մայցնեցի դիմացի ժայռերը*. *ձի նստեցի և թամբին նստեցի*. *արուն թռչել*. *քայլի թեզ քառին ընկած ճանապարհը* և նման կապակցություններում համապատասխան քայլերի խնդրառության կամ պարագառության հարցը. էրբ դասական քերականության մեջ ընդունված է դրանք պարզապես խեղճ-պարզազանք կոչելը. իսկ խնդրառու քայլը չեզոք սեռի քայլ (տե՛ս Ա. Աբրահամյան. *Բայը ժամանակակից հայերենում*. Եր., 1962. էջ 696) Այս մտածմամբ առավել համոզիչ կենրկայացվեր կարոտել քայլի արժույթային փոփոխությունը (տա՛ էջ 80). որը այսօր լավագույն դեպքում կարող է դիտվել որպես կրկնասեռ քայլ. քայլը այ՛ էրբեք միայն չեզոք. քանի որ համառորեն միտում է ներգործականության (կարոտել ի նչք *տանը*. *հայրենիքը*. *ձնեղալպարի փողոցները*. *համալսարանը*) Ի դեպ. չեզոք սեռի առաջարթերում սպաղել են առանձին ներգործական սեռի քայլեր (*ակնարկել*(93). *մտորել*(103). *բարբառել*(90). *նախընտրել*(97):

3 Բայի բառային իմաստից. գործառնությունից և բայասեռից քայլի՝ տարբեր դասերի խեղճիներին հետ քայլի կապակցական համատեղելիությունը առնչվում է նաև բառակազմությանը Բայի բառակազմական փոփոխությամբ պայմանավորված հաճախ փոխվում է նրան ներհատուկ սեռի քերականական կարգը. բնականաբար նրա՛ արժույթը. այս դեպքում պարագառությունը կամ խնդրառությունը. և կամ փոխվում է արժույթը՝ առանց սեռի փոփոխության: Օրինակ վարել ներգործական սեռի քայլը *բառաբարդվելիս* (օր. *պաշտոնավարել*) ձևը է բերում չեզոք սեռի հատկանիշներ գուրկ խնդրառական արժույթից. իսկ. ասենք. խնդրառական արժույթից գուրկ չեզոք սեռի աճել քայլը *վերածել*, *սերտածել* քաղաքություններում ձևը և բերում խնդրառական արժույթ *վերածել* կամ *սերտածել* ինչ-որ բանի Միևնույն ժամանակ. հասկանալի է. քայլի բառակազմական հատկանիշներով պայմանավորված արժույթի փոփոխության քննությունը կարող էր դրդել

ատենախոսին անհարկի ընդլայնելու աշխատանքի ծավալը, ջանի որ անհրաժեշտություն կառաջանար քննարկելու կազմությամբ բարդ, անանցավոր և ծագմամբ արմատական ձևությամբ բայերի, բարդության բաղադրիչների քերականական հարաբերությունները և:

4. Անուրանալի է Գ. Ջահուկյանի վաստակը հայ և ոչ միայն հայ լեզվաբանության մեջ: Եվ լեզվաբանական շատուշատ հարցերի քննարկումներում անհնար է չանդրադառնալ նրա տեսության հիմնարար դրույթներին կամ պարզապես արտահայտված կարծիքներին: Սակայն մեր խորին համոզմամբ դրա անհրաժեշտությունը բնավ չկա, երբ խոսքը վերաբերում է հանրահայտ գիտական ճշմարտություններին, քանի որ դրանցից չի շահում գործի գիտականությունը, որը արդեն իսկ ապահովված է գիտական հարուստ ապարատով: Օրինակ հարկը կա՞րողոք ծավալուն մեջբերումներով վկա կոչելու լեզվաբանին, երբ խոսքը գնում է ընդամենը անանցողական բայերի՝ տարբեր հոլովներով տրական, բացառական ևն, խնդրառական արժույթի մասին (տե՛ս ատ. էջ 83-84): Ջահուկյանը ծանր հրետանի է և պիտի կիրառության դրվի ըստ անհրաժեշտության:

5. Հայտնի է, որ ուժեղ կառավարմամբ խնդրառական արժույթից գուրկ շատ բայեր փոխաբերական կիրառությամբ ձևոր են բերում խնդրառու բայի հատկանիշներ չեզոք սեռի բայը գործածվում է ներգործական սեռի կշանակությամբ, ինչպես՝ «Ձանգը գրկում է օրվա գուրկը»: «Գայլը ... ոռնացել է իր վիշտը անկշտում,—Ոռնացել է անձուկ իր տառապանքը, Անասնական իր քաղցը» Կամ երբ չեզոք սեռի բայի ուղիղ խնդիրը ձևավորվում է բայի արմատական մասով կամ դրա հումանշային տարբերակով (հանդես է գալիս գործողության ներքին խնդրառությամբ)՝ «Սոնան մեռավ էրեխայի վրա, և լաց լացեցին նրա մայրը, բարեկամները»: նմանապես վազք վազել, գրույց գրուցել, ծուխ ծխալ, կինըը նեքել, կոիվ կովել ևն Առանձին նորագույն աշխատանքներում այս էրևույթը համարվում է կրկնաստեղծության դրսևորում (Տ. Սաֆարյան, Հայերենի կրկնաստեղ բայեր, Եր., 2013), բայց հայտնի է նաև, որ դասական քերականությունը (Ա. Աբրահամյան, Ս. Աբրահամյան, Մ. Ասատրյան և այլք) չի ընդունում այդ կարծիքը: Ատենախոսի անդրադարձը այս էրևույթին մեկ անգամ նս կարող էր առիթ դառնալ լույս սփռելու համար հարցի վրա:

6. Միանգամայն տեղին էր նախորդ պաշտպանության ժամանակ դոկտոր ընդդիմախոսի դիտողությունը, թե բառային մակարդակում ներակայում կոչված երևույթի որոշ դրսևորումներ երբեմն ներկայացվում են հնացած, անգործածական բառերի օրինակներով: Քերականական ցանկացած իրողության նկարագրություն և ցանկացած փաստարկում ուժեղ է, եթե զարդարվում է վառ ու դիպուկ օրինակներով: Իհարկե, դա այդպես է: Բայց եկեք խոստովանենք, որ երբեմն կամ նույնիսկ հաճախ դժվար է լինում հայթայթել համոզիչ օրինակների բավարար քանակություն բառերի թվարկությունը հարստացնելու համար, ուստի այլ ճանապարհ չի մնում. քան դիմելու ամենափրկիչ բառարաններին կամ ՋԼՄ-ներին, և ահա շատ հաջող օրինակների կողքին հայտնվում են բառեր, որոնք այնքան էլ արդիական ու կիրառելի չեն կամ պարզապես դիպվածային են, որպես ունենք նաև այս դեպքում *հրթիռվել, հիշանալ, բանաստեղծանալ, ցերեկանալ, ֆաշիստականանալ, հակակայել, դեղնակոթել* ևն:

Եվ այսպես: Պաշտպանության է ներկայացված միանգամայն հաջողված գիտական աշխատանք: Արված դիտողությունները ընդամենը նպատակ ունեն ատենախոսի հետագա աշխատանքները ավելի մշակված և կատարելագործված տեսնելու:

Հրապարակված վեց հոդվածները և սեղմագիրը արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Լալա Հովհաննեսի Գրքիկյանի «Ժամանակակից արևելահայերենի չեզոք սեռի բայերի արժույթը» թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է և Ժ.02.01 թվանիշին և բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները: Նրա հեղինակը վստահաբար կարող է հայցել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ընդդիմախոս

Բ. Գ. Ղ., պրոֆ. Յուրի Ավետիսյան

13.12.2024 թ.